

19994

891.99-192

K-23

894.00 - 192

Ա - 23

0 Ա 3



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՒ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՐԳԸ



20 03

1. Ա. Գուշկով, 2. Ա. Սերինսկի, 3. Ն. Զիտիկով, 4. Մ. Աղձուխյան.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՄ
ԵՐԵՎԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

եի

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՐԳԸ

Հովերն ընկան, զովերն ընկան,
Արեղակը մայր մտաւ...
Ա՛խ, էս ճամբէն շատ երկար էր,
Սիրոս անուշ քուն մտաւ...
Այդ հովերու զովերու դէմ,
Կուրծքս բացի, ծծեցի,
Աննչ, աննչ հայրենիքիս
Համն ու հոտը զգացի...

Ժող. Ե. Գ:

141/85

ԹԻՖԼԻՍ
ՏԳՍՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵՐԱՆՅՈՒՆ
1917



1

ՏՈՒՐ ԶՆՈՒԴ ԵՂՐԱՅՐ

Տուր ձեռքդ եղբայր, ժամ է շարժելու.
 Ժամ է ժամ լուսի՜ սօքի ելնելու.
 Հասէլ է արգէն, հայերուս օրհաս.
 Լինել չըլնի՜ մեզից է կախած—...
 Տուր ձեռքդ, եղբայր հերիք համբերենք,
 Հերիք, ուրիշն օղնութիւն հայցենք.
 Մենք ենք տանջողը, մենք չարչար-
 ւողը,

Մենք պիտի լինենք մեղի փրկողը...
 Մեր վեհ հայրենիք դարերով ճնշւած.
 Դարեր շատ ու դատ մեր արեամբ
 ներկւած.

Պահանջ է մերձիկ արիւնով մաքրել.
 Թշնամու՜ արեամբ մեր դաշտ ու լեռ-
 ներ...

Շտապիր, եղբայր, մեռ ահա քեզ գէնք,
 Սորանով միայն փրկւելու ենք մենք,



(28594-62)

(1402-62)

92657-42

632-2002

Այս է գործ ածուժ մեր դէմ թշնամին,
 Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:
 Այնտեղ է քո կեանք. այնտեղ է քո մահ,
 Ելի՛ր ընդ՝ յառաջ ելի՛ր դու անահ,
 Արդարութիւնն է գործին նշանակ,
 Այնտեղ կը կգտն է նա իւր հաղթա-
 նակ:

Շտապիր, քանի դեռ չէ անագան...
 Բեզ կը հետեւի ամբողջ Հայաստան.
 Ազատութիւնն է գործի գրաւական.
 Այնտեղ կստանաս պսակ պատւական:



ԱՐԵԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Ինչ շահեցիր, երբ խուժեցիր
 Հայի խաղաղ օթևան,
 Կրակ տուիր, մոխիր դարձրիր.
 Բերիր մեծ սուգ ու շիւան:
 Ինչ շահեցիր, երբ մօր առջև.
 Գու մորթեցիր հայ մանկան,
 Վարդի նման թառամեցրիր
 Հիւր-փերի կոյս-աղջկան:

Ինչ շահեցիր, երբ հայ երկիրն
 Արիւր կարմիր արեան ծով,
 Սբար աշխարհ դղրդացրիւ
 Հայի լացով ու կոծով:
 Թէ քաղցած ես, եկ—հայր քեզ
 Առատօրէն հաց կը տայ.
 Թէ հառամ է հայի հացը—
 Վաստակդ քեզ հաց կը տայ:
 Էլ ինչու ես իզուր տեղը
 Գու հրճուանքով դիւային
 Սլան թալան կողոպտելով,
 Զնջում անմեզ հէզ հային:
 Գիտեմ, պիտի պատասխանես
 Վերովհետև նա հայ է:
 Օ՛ անաստուած, հայ լինելը
 Միթէ յանցանք ու վայ է...

ՀԱՅ ԱԶԳ

Եթէ քնարը լար չունի,
 Խեղճ քնար ածողն ինչ անէ,
 Հայ ազգը բարերար չունի,
 Գատարկ մտածողն ինչ անէ:
 Ահա՛ վեց դար է անտարբեր,
 Նիրհում է հայը բազմահամբեր,

Գուցէ տեւի եւ դարեր
 Միտի ցաւակցողն ինչ անէ:
 Անմիութեան դրօշակն տակ,
 Քափառում է աննպատակ,
 Եթէ մնայ միշտ այս տեսակ,
 Յառաջ ընթացողն ինչ անէ:
 Կար ժամանակ որ հայ ազգը
 Իրտում էր իւր անուան յարգը,
 Որ փոխել է հայի վարքը,
 Վե՛հ կարգադրողն ինչ անէ:
 Հարիւր հայից՝ մի գրագէտ,
 Հազիւ գուրս գայ, եւ բանագէտ,
 Հայերիս մեծ մասն է տղէտ,
 Անբաղդ յորդորողն ինչ անէ:
 Տեղեակ չէ հայը իւր նպտենեաց
 Քաջութիւնիցն անցկայրած.
 Հայերի միտքն է բթացած,
 Ուսում տարածողն ինչ անէ:
 Պարտիզպան, թէ փափագում ես,
 Որ ազգիդ օգտակար լինես,
 Իրաչնակցութեան որ չ'դիմես,
 Քեզ յոյս խոստացողն ինչ անէ:

ՀԱՅ ՀԵՐՈՍԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ

Մի խնդացէք, ես տրտում եմ,
 Քանի որ իմ օրս սև է,
 Մութը բանտում խարխափում եմ!
 Թէև դուրսը պարզ արև է:
 Հայրենացս ջերմ կարօտով,
 Տոչորում եմ վառւում բոցով,
 Թէ Աստուած տայ դուրս գամ շուտով,
 Նպատակս անկերև է:
 Պիտի վաղեմ կուրի դաշտը,
 Այնտեղ որտեղ Անգրաիիկն է.
 Թո՛ղ դէմս գայ Զրադաշտը,
 Իմ ուժերս յարատև է:
 Թո՛ղ կուրծքիցս ես գնդակով:
 Վերք ստանամ գոռ թշնամուց,
 Բայց ես դարձեալ իմ նիզակով,
 Կ'ծակեմ, ձեռքս թեթև է:
 Կ'ծակեմ այն գարշելի բիրտ,
 Մուռտար քրդի ճակտի միջէն,
 Կ'խողողեմ մանրակրկիտ.
 Ես վախ չ'ունեմ, թէ նա դև է.
 Այն ժամանակ իմ արիւնը,
 Թո՛ղ խառնւի քաջերի հետ,
 Տաժանէ բանտի անկիւնը,
 Այնտեղ մահը խիստ թեթև է:

Կ Տ Ր Ի Չ Ի Ե Ր Գ Ը

Վազիր, իմ ձի այդպէս թուուիր եռանդով
Ինձ տօր, հասցրնու կուուի դաշտըն ինձ
շուտով:

Եղբայրներս կարօտ են մեր օգնութեան.
Շուտով, իմ ձի, շուտով վազիր ժրաջան:

Մի վհատիր. մենք հեռացանք ամբոխից,
Փուչ ամբոխի անմիտ և լիրբ ծաղրանքից.
Տիրոջդ համար թող ոտներդ ամբանան.

Շուտով, իմ ձի, շուտով վազիր ժրաջան:
Զի, մի վախիր թէ կան խորշեր առաջիդ.

Ախ, քեզ հալալ բոլոր կերած քո գարիդ.
Թըռեր, անցիր այս դաշտերն անսահման

Շուտով իմ ձի, շուտով վազիր ժրաջան:
Զի, լուում են արդէն աղմուկ, աղաղակ.

Ես լուսնի պէս տեսնում եմ մեր նպատակ.
Ձի շուտ արտ, ձի, ոտներիտ ես դուրբան.

Զի, քիչ մնաց, շուտով հասիր ժրաջան:
Լ. Մանուէլեան

Ձ Ի Ն Ի Ո Ր Ի Ն

Հայաստանից եկած զինուոր
Պատմէ ինձի հայրենիքից,
Անգրանիկի զինուորները
Վրէժ լուծում են քիւրդերից:

— Ուրախ եղիր դու հայ տղայ,
Ունիս պաշտպան քաջ Անգրանիկ.
Մուրադի պէս հոտոտ ծաղիկ
Էլ ինչ է ուզում հայրենիք:

Վիթխարի պէս կորիճ Սեպուհ
Պողպատի պէս բազուկները
Գայծակի պէս կարիճները
Էլ ինչ են ուզում հայրեր:

Գէորգ Չաւուչն ու Հրայրը
Հաղարաց զօրքի դէմ կանգնեցան,
Թուրքաց զօրքին փախցուցին Վան
Էլ ինչ է ուզում Եւրոպան:

Երկու առիւծ Պողոս Տիգրան
Ձեռները բռնած հրացան
Թշնամուն արին ցիր ու ցան
Արդեօք պատիւ չէ Իսախանիցութեան:

Մոկեցին ու Աւետիսը
Սարսափ ձգին Թուրքաստանը.
Կոտորեցին ողջ բանակը.

Ազատուած չէ հայաստանը:
Փերհաս, Արշակն ու Մեշեղին,
Կուում էին միշտ անվախ
Թշնամուն դարկին մեծ վնաս
Ուրախ չես դու երգիչ Միջագ:



ԵԱԳՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ո՛րդ դու քաջ իգիթ առձիւ կայծակի
 Վե՛հ Դաշնակցութեան կտրիճ խմբակի
 Սիրող հայրենիք ընկեր ու ծնող
 Խեղճ ու նաչարի սիրտը դո՛ւ մախթող
 Շուլաւերու իգիթ կտրիճ դու Եազոր
 Քո բարին յիշում ենք ամենայն օր.
 Խաղաղութիւն սիրող արիւն ջուրանող
 Խեղճ ու նաչարի բանտից ազատող:
 Արձիւ ընկերից մէկն է Վարդանը
 Որ մեր քաջ իգիթը նւիրած իր ջանը
 Երկուսն էլ միասին մանկութեան օրից
 Սիրով էին ինչպէս մի հալալ մօրից:
 Փոլադ Վարդանի հազուտ փող ու հացը
 Նւիրում էր իգիզը նորա որդոցը
 Շուլաւերում իգիթը հրացան պարպող էր
 Եազորը բոլորի քաջ ու իգիտն էր:
 Յատանի տունը թող քանդի
 Աստուած,
 Նրայ ընտանեացը մենք տեսնենք
 քերթաց
 Աւերակ կըսպասեմ պատասխանիդ
 Շուլաւէր
 Այդ քաջ յերոսը ձեր աջ թևն էր:
 Ձը հայտնեցիք նորան չար սատանի միտքը
 Նամարդ մարդուն վերջ կըտար նա ինքը
 Սատանեն հասաւ իր նպատակին
 Ընկերոջ ձեռքով զո՛հ տաւ քաջին:

ԻՏԱԼԱՑԻ ԱՂԶԳՍՅ ԵՐԳ 1859 Թուականից

«Մեր հայրենիք թշուառ, անտէր,
 Մեր թշնամուց ոտնակոխ,
 Իւր որդիքը արգ գանջում է,
 Հանել իւր վրէժ քէն ու ռխ»
 «Մեր հայրենիք շղթաներով
 Այսքան տարի կապկապած,
 Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
 Պիտի լինի ազատված»:
 «Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
 Որ իմ ձեռքով գործեցի,
 Գիշերները ես քուն չեղայ,
 Արտասուքով լուացի»:
 «Նայիր նորան, երեք գունով,
 Նուիրական մեր նշան,
 Թո՛ղ փողփողի թշնամու դէմ,
 Թո՛ղ կործանուի Աւստրեան»:
 «Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
 Պատերազմի գործերում
 Կարէ օգնել իւր եղբօրը,
 Ձանց չարեցի քո սիրուն»:
 «Ահա իմ գործ, ահա՛ դրօշ,
 Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
 Գնա՛ փրկել մեր հայրենիք,
 Պատերազմի վառ հանդէս»:

— Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնէ.

Բայց երանի՛, որ իւր ազգի

Ազատութեան կը զոհվի:

«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,

Ազգի սէրը քաջալեր,

Գնա՛, թէև չեմ կարող գալ,

Բայց իմ հոգին քեզ ընկերս:

«Գնա՛ մեռիր դու քաջի պէս,

Թող չտեսնէ թշնամին

Քո թիկունքը, թող նա չասէ

Թէ վատ է Իտալացին :

Ասաց, տուեց օրիորդը

Իւր եղբօրը մի դրօշ,

Մետաքսից էր, ազնիւ գործած,

Ուր երեք գոյն կան որոշ:

Նղբայրն առաւ և ողջունեց

Իւր սիրեկան քնքուշ քոյր,

Առաւ զէնքը, սուր, հրացան,

Հեծաւ իւր ձին սևաթոյր:

— Գուրի՛կ—գանչեց քաջ պատանին, —

Մնաս բարեաւ, սիրական,

Ոյս դրօշակին պիտի նայի

Ամբողջ բանակ Իտալեան:

Նա սո՛ւրբ է ինձ, երբ մկրտված

Սրտասուքով ու կնքած,

Դու յանձնեցիր ինձ յիշատակ,

Հայրենիքի նուիրված:

Թէ մեռանեմ, դու մի՛ սգար,

Իմացի՛ր որ տարեցի

Իէպի մահու արքայութիւն,

Իմ հետ քանի թշնամի:

Ասաց: վազեց դէպ ՚ի հանդէս

Աւտօրիացոց յանդիման,

Իւր արիւնով գնել յաւէժ,

Ազատութիւն Իտալեան,

Ո՛հ, իմ սիրտը կտրատվումէ

Տեսանելով այսպէս սէր.

Իէպ ՚ի թշուառ մի հայրնիք,

Որ ոտնակոխ եղած էր:

Ո՛հ... արտասուք ինձ խեղդումեն,

Այլ չեմ կարող բան խօսել.

Ձէ... թշուառ չէ Իտալեան,

Եթէ կանայք այսպէս են:

(Մ. Նալբանդեանց):

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԸ ԲԱՆՏՈՒՄ

Եկ համբուրեմ քեզ իմ ընկեր

Տամ իմ վերջին բարևս.

Մնաք բարև մայրեր քոյրեր

Յիջեցէք իմ անունս:

Շղթաեակապ կերթամ հեռու
 Մուժ սարերում ու ձորերում
 Ել ով գիտէ երբ պիտի գամ
 Իմ հայրենի երգում:

Ես ոչ գող եմ ոչ աւաղակ
 Հափշտակող քենաբար,
 Եւ ոչ մատնիչ մէկ անարատ
 Ուրացող սուրբ ճանապարհ:
 Արիւն ծրծող տգրուկների
 Դէմը կուռոյ մէկ ոխեմ
 Արև տուող հայրենիքի
 Լոյս տարածող զինոր եմ:

Ես Սրմօն ճիշտ Լօռեցի
 Անջատում եմ մայր հօզից
 Ընտանիքս բեխլիանցի
 Բաժանում եմ ինձանից:

ՀԵՐԻՔ Է ՄԱՅՐԻԿ

Հերիք է մայրիկ իմ դու ինձ փալփալե
 Հերիք է մայրիկ ինձ կրծքիդ սեղմես,
 Ես կուզեմ խմել ջրի տեղ արիւն
 Ես կուզեմ մեռնել ես կուզեմ կուռել:
 Հասակս քսան տարուց անցկացաւ
 Սիրտս վրէժով լիքը լցւեցաւ,
 Չեմ ուզում տեսնել եղբայրս թշուառ

Ես կուզեմ կուռել ես կուզեմ մեռնել:
 Լացով չենք կարող փրկել հայաստան
 Մայրիկ ինձ պէտք է ձի սուր հրացան,
 Ձեռքերս ծալած չեմ կարող նստել
 Ես կուզեմ մեռնել ես կուզեմ կուռել:
 Համիդը ունի գործեր մեզի հետ
 Մեզ կոտորում են մեզ թալանում են.
 Հերիք է, մայր իմ, կարող ես լուել
 Ես կուզեմ կուռել ես կուզեմ մեռնել:

ԶՈՂՈՎՐԿԱԿՍՆ ԵՐԿԵՐԻՑ

Ալ ու ալուան ես հագել,
 Կարմիր լալա ես դառել.
 Սիւրէի կլոր մէջքդ—
 Փամփուշտներով ես ծածկել.
 Աղբէր ջան, քեզ դուրբան,
 Մեր գիւման դու ես, դու:
 Մէջքդ կապել ես խանչալ,
 Դաստէն նաշխած է խալ, խալ.
 Խանչալիդ կոթին մատաղ,
 Քո կերած կաթն է հալալ...
 Ձեռք թուանք ես առել,
 Դուշմանի դէմը կայնել
 Ինձ ասա գլխիտ մատաղ,
 Բենիշդ ո՞վ է կարել...
 Առիւծի պէս կայնել ես,
 Պեխերդ ոլորել ես
 Սև թռու պեխերուդ մատաղ,
 Յաղթանակը տարել ես...
 Դանդառ.

ՆՈՎՐՈՒՋԻ ԻՆՐԳԸ

Դաշնակցութեան քաջ խմբերը Պերնիա
 քիւղում միացան.
 Խմբապետն էր քաջ Նովրուզը, բաժա-
 նեց քաջաց հրացան.
 Երդւեցին դրօշակին. քահանայով մասին
 Շարժուեցաւ խումբը առաջ երկու սահ-
 մանից անցաւ:
 Արշալոյսը նոր էր բացուում տեսան թըշ-
 նամեաց դօրքերը
 Քաջ Նովրուզը հրահանգ աւեց առաջ
 եկէք տասնեակներ
 Ամէն մէկս հազարի դէմ պիտի կուենք
 եղբայրներ.
 Կարնեցի քաջ Դերենիկն ասաւ բռնէ լաւ
 դիրքեր:
 Դէրենիկն ու Արտաշէսը ինչպէս կորիւն
 եղբայրներ
 Բասէն դաշտու մէջը լցրին թշնամու շատ
 դիակներ
 Քաջ Սէրոբը և իւր որդին ինչպէս ազ
 նիւ էակներ.
 Նահատակւան քաջերն այնտեղ մեզի
 մնաց վրէժներ:
 Հայաստ. հողի վրայ դրօշակ ծածանւեցաւ
 Երեսուն ժամ ճակատամարդ հազարաց
 դէմ կռվեցաւ
 Հայ քաջերի գնդակներից շատ տաճիկ
 գլորվեցաւ.
 Ես միջազնեմ կրողս թրքեմս ունիմ փամ-
 փուշտ հրացան:



632-2001

506ms.

height. f. - 1



9
19994

2015

